ՌԱՖԵԼ

ԽՈՍՈՂ ԱՌՈՒՆԵՐԸ



891.99ս.
Ռ-12

ԴԵՏՀՐԱՏ

30 MAY 2011

891.994
Ռ-12
Ար

Ռ Ա Բ Ե Լ

ԽՈՍՈՂ ԱՌՈՒՆԵՐԸ

Նկարները՝
Կ. Տիրաթուրյանի

ՊԵՏՀՐԱՏ
ՀԼԿՑԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ՑԵՐԵՎԱՆ 1398
1938

24.07.2013

12283

2754
38

Արագածի լանջերից
Ինչքան առվակ ե հոսում,
Յուրաքանչյուր կաթիլից,
Հազար բերան ե խոսում։

Այն ձյունապատ ժայռերից,
Այն ծաղկազարդ լանջերից,
Վճիտ առվակն ե հոսում,
Քչքչալով ցած վազում։

Նա վազում է ու կանչում,
Ուրախ, զվարթ կարկաչում,
Դուրս է փախչում ափերից
Յեվ վորոնում ճայնակից։

Առուներին հավաքում,
Այսպես կոչ է նա անում.
— Լսեցեք, իմ ընկերներ,
Կարկաչախոս առվակներ,

Արագածին հարազատ,
Այնես մեկդ մի-մի զարդ,
Արծաթափայլ, շողշողուն
Նրա լանջն եք զարդարում։

Ձեկեք դուք ինձ հետեվեք
Դուք ել ինձ հետ միացեք
Զրամբարը մոտակա,
Մենք դարձնենք մի հսկա։

Այնուհետև շատ ազատ
Մեր ջրերը հորդառատ,
Կվողողեն ցանքսերը,
Ու մեր ծարավ դաշտերը։

Առուները միացած,
Ցեվ իրար հետ խոսք կապած,
Ուրախ զվարթ խաղալով,
Դաշտ վազեցին յերգելով։

Ու ջրեցին կոլխոզի,
Այգիները խաղողի,
Ցեվ բամբակի հարթ, սիրուն,
Լայն դաշտերը զարդարուն։

Զորի բերնում խրշշալով,
Հորդ ջետակը վրշշալով,
Պտտում է դիմացի
Անիվները ջրաղացի։

Այդպես նրանք միացած,
Ցեվ ահագին ուժ դարձած
Քանի-քանի դարեր դեռ
Կզարդարեն հողը մեր։

04

Արագածի լանջերից
Ինչքան առվակ ե հոսում,
Յուրաքանչյուր կաթիլից,
Հազար բերան ե խոսում։

Գլխ. խմբագիր՝ Հ. Հայրապետյան
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Սրբագրիչ՝ Թ. Հովակիմյան

ՀՀ Ազգային գրադարան
NL0402377

Գլավլիտի լիազոր՝ Ղ—3508. Հրատ. 4158.
Պատվեր 7. Տիրաժ 5000.
Հանձնված ե արտադրության 2 հունվարի 1938 թ.
Ստորագրված ե տպագրության 21 մայիսի 1938 թ.

Պետհրատի I տպարան, Ցերեվան. Լենինի 66

29(
12285

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

РАБЕЛ

Говорящие ручейки

Гиз Арм. ССР, Ереван, 1938